ԼՈՅՍ

ՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՅԻՆ

Կը հրատարակուի Հորեքշաբթի եւ Շաբաթ օրերը։ Տարեկան գինն է մէկ լիրա օսմանեան։ Մէկ թերթը 40 փարա արծաթ։ Նամակ կամ ո եւ է գրութիւն պէտք է ուղղել Աւ. Մ. Բափամաճեան Կոստանդնուպոլիս, Մէրճան ջարշի Բիւշտի Էֆէնտի խանի տակ Մ. Կ. Սարքեանի տպարանը։

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 100 — 1880 — ՀՈՐԵՔՇԱԲԹԻ 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԳԱՏԸ—ԳԻՒՂ

Անցած կիրակի գործով մը յիշեալ գիւղը դանուելով՝ անձամբ ականատես եղայ այն չարժման եւ փութաջան գործունէութեան, զոր ցոյց կուտար Սովելոց Դատը-գիւղի Պատ. Մանախումբը։

Տեսնելու բան էր թէ ո՛րպիսի եռանդով կը վարէր սա իր ազգասիրական պաշտօնն և Դատը—գիւղին ալ իւր սովատանջ եղբարցն օգնելու համար փոխադարձաբար ո՛րպիսի ազգասիրական ոգի և զգայում ցոյց կուտար։

Աղգանուէր—Հայուհեաց ընկերութեան պատուարժան անդամուհիք ալ իրենց վսեմ նպատակն յառաջացնելու մասին այնպիսի փութաջանութիւն, եռանդ և անձնուիրութիւն ցոյց կուտան, ընդ որ կը հիանայ մարդ և կըսէ իւրովի՝ կանանց ազգասիրական գործունէութենէն պէտք է օրինակ առնեն անտարբերներն և զգան թէ հայրենեաց ծառայելու համար Հայն ի՞նչ ընել կը պարտի։

Գալով Դպրոցասէր—Հայուհեաց ընկերութեան պատուարժան անդամուհիներուն տարած անձանձիր աշխատութեանն ու կատարեալ անձնուիրութեանը՝ զոր ի գործ կը դնեն անդադար, և որք իրենց հանդիսաբ կը զոհեն, կըսեմ, չքնաղ հայրենասիրութեան գործնական դասը կաւանդեն։

Ներսէս Վարժապետեանի անունն ատենց մեծ մղում և քաջալերութիւն է։

Տեսայ որ Տիկին Ճուսաբ տոմսակ ի ձեռին դռնէ դուռ պտտելով՝ կը խնդրէր, կը քարոզէր և նպաստ ու օգնութիւն կը խնդրէր։

Այլ ի՞նչ ըսեմ Սովելոց Խնամող Եկեղ. Ճանձնախմբի անդամոց, որ դրեթէ վայրկեան մ՚անգամ չեն զոհեր և դիշեր ու ցերեկ կաշխատին ու կը տքնին։

Ո՞վ չզդածուիր և չօրհներ ատենց անունն, որ հայրենեաց ներկայ դժնդակ աղեան հալածելու, որով և Հայն Հայաստանի մէջ վերկելու համար ամեն զոհողութիւն յանձն առած են։

Կիւլպէնկեան, Ունճեան և Բարաղամեան էֆէնտիներու առանց տոկոսի մեծաքանակ փոխատուութիւնն արդէն յայտնի է։

Սակայն պէտք է ըսել թէ մեր ազգային մեծամեծ և բազմաեռակ պէտքերուն առջև այսքան գործունէութիւն բաւական չէ։

Շարժումն հարկ է ընդհանուր լինի և ամեն թաղ ու գաւառ ալ տարածի, որովհետև մասնաւոր ջանքերը բաւական չեն։

Ժամանակ է որ ամեն Հայ շարժի, գործէ, աշխատի, ջանայ, սրտի և Դատը-դիւղցւոց ազնիւ օրինակին հետևի, և եթէ այսալ բաւական չէ, թո՛ղ օրինակ առնու այն ժողովուրդներն, որ օր մ՚առաջ մեզի պէս ընկճեալ, թշուառ և հալածեալ էին, սակայն այսօր փրկուած են։

Ի՞նչ ըրին և ի՞նչպէս փրկուեցան. — կը հրաւիրենք անգամ՝ մ՚ալ աչքէ անցնել Հանդիսիս մէջ «Մեր Պէտքերը» վերնագրով յօդուածներն և այն Պուլկար կնոջ ազգասիրական զոհողութիւնն, որուն նկատմամբ ալ խօսած ենք, և ահա անգամ մ՚ալ կը կրկնենք թէ յիշեալ կինն՝ որ խեղճ սպասուհի մ՚էր, ամէն ամիս 60 ղրշ կուտար իւր ազգին։

Իւրաքանչիւր Հայ ահա այսպէս յիշեալ Պուլկար կնոջ ազգասիրութեանն հետևի, որովհետև գործելու և անդադար գործելու և զոհողութիւն ընելու ժամանակ է։

Կարճ խօսք. — առանց զոհողութեան փրկութիւն չկայ։

ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Այն ազգն ու ժողովուրդ, որ անդադար կը հսկէ իւր շահուցն ու իրաւանց անվրէպ պահպանութեանը, կը նշանակէ թէ մեռեալ չէ, կենդանի է, կենդանութեան ամեն նշան ցոյց կուտայ, արթուն է և արթնութեամբ կը գործէ։

Արթնութիւնն ամեն պարագայի մէջ միշտ օգտակար է։

Օրինակ առնունք այն մասնաւոր անձինքը, որ իրենց գործոցը վրայ իրենք կը հսկեն անձամբ ո՛ր չափ ալ որ ամենահարուստ լինին և այսպէս ընելնուն համար չեն սխալիր երբէք, մանաւանդ որ մեծապէս կը շահին, որովհետև շահ կոչուած բանն ուշադրութեամբ հսկելով կրնայ պահպանուիլ։

Տեսէ՛ք մայրաքաղաքիս Եւրոպացի վաճառականներն ինչպէս կաշխատին և ո՛րպիսի փութաջանութեամբ կը հսկեն իրենց շահուցը։

Ինչպէս վաճառականութեան և ամեն տեսակ առևտուրի, նաև ազգային շահուց և իրանց պահպանութեան համար կենդանութիւն և արթնութիւն հարկաւոր է։

Տեսէ՛ք անգղիական ազգն ի՞նչպէս կը հսկէ իւր շահուցն ու իրաւանցը վրայ և ո՛րպիսի արթնութիւն ցոյց կուտայ։

Առանց երկրայութեան կրնանք ըսել թէ Անգղիական մեծ ազգին հսկայաքայլ յառաջադիմութեան շարժառիթը՝ բայց յայլոց՝ իր կենդանութիւնն ու արթնութիւնն է։

Խնդիրը միայն շահեր ունենալու վրայ չէ, այլ զանոնք չվատնգելու և պահպանել գիտնալու եղանակներն ի գործ դնելուն մէջ է։

Մեք երբեմն ազգային կենդանութենէ և արթնութենէ զուրկ գտնուելնուս պատճառաւ նիւթապէս և բարոյապէս շատ բան կորուսած ենք։

Արթուն և կենդանի է այն ժողովուրդն որ իր պարտքը կը կատարէ և իրաւունքը կը վայելէ։

Կենդանութենէ զուրկ ժողովուրդը միայն իր պարտքը կը կատարէ մեքենաբար և փոխադարձաբար իր իրաւունքը վայելելու մասին անտարբեր կը դտնուի։

Օրինաւոր իշխանութենէ բխած արդար օրինաց առջև մեքենաբար հնազանդելու

պարտականութիւնը կը հասկնանք, բայց արդար իրաւունքներ վայելելու մասին կուրութիւնն՝ որ ամեն պարագայի մէջ դատապարտելի է, պէտք է զայնելով անցնիլ.

Վարչութիւններ կուգան ու կերթան, Պատրիարքներ ու Առաջնորդներ կը հաստատուին և կը հրաժարին, յանձնախումբեր կը դրուին ու կը լուծուին և վերջապէս քննիչներ կը ղրկուին ու կը դառնան. բայց առանց պաշտօնին և գործողութեան համարն ե՛րբ առնուած է, ինչո՞ւ չառնուիր և ինչո՞ւ չառնուի.

Սահմանադրութեան հոգին համարատուութիւնն է։

Ջնջէ անոր մէջէն զայդ, և այն ատեն չենք գիտեր թէ ի՛նչ է Սահմանադրութիւնն և ի՛նչ նորա կարևորութիւնը։

Ազգաց և ժողովրդոց համար աշխարհի վրայ ամենէն գէշ բանն օրէնքներ ունենալ և զանոնք չգործադրելն է։

Հայուն այսօրուան արդար դանգատները սա եղրակացութեան մէջ կը բովանդակին, այն է թէ՝ օրէնքը ճշդիւ չգործադրելուն պատճառաւ իրաւունք, արդարութիւն, հաւասարութիւն՝ որով և ապահովութիւն գրեթէ չկայ և սոյն չգոյութեան հետևանք եղած են ընդհանրապէս զեղծմունք, որ իրաց վիճակը ծանրացնելու միայն ծառայեցին։

Ինչո՞ւ ուրեմն չհետևինք մենք ալ քաղաքակրթեալ ազգաց օրինակին և ինչո՞ւ բաղդատենք մեր վիճակը մենէ շատ վար դանուողներուն հետ, որոց վայրենի և կամ կէս վայրենի անունը կուտայ քաղաքակրթեալ աշխարհը։

Գո՛նէ ես իմ մասիս չեմ զիջանիր երբեք մեր ազգին վիճակն անոնց հետ բաղդատել։

Ազգ մը իր յատուկ արժանապատուութիւնն ու ազգային հպարտութիւնը պէտք է որ ունենայ և հետևաբար զայն պահպանէ և մատաղ սերունդին մտացը մէջ այս զգացումներն ալ զարթուցանելու հոգ տանի, և ինչպէս Գերմանացին Գերմանացի, Անգղիացին Անգղիացի, Գաղիացին Գաղիացի, Իտալացին Իտալացի, Ռուսն Ռուս, և Յոյնն Յոյն ըլլալն իրեն փառք կը համարի. այսպէս և Հայն ալ Հայ ըլլալը պէտք է իրեն փառք համարի. նուաստացուցիչ պայմաններէ միշտ զգուշանալով և իր ազգային արժանապատուութիւնն ու հպարտութիւնն՝ ինչպէս նաև ազգային կենդանութեան բոլոր նշանները միշտ վառ և կենդանի պահելով իր սրտին մէջ.

Որպէս ըսինք, ազգային կենդանութեան առաջին նշան՝ համարատուութիւնն ըլլալով՝ Ազգային ժողովն այս մասին իւր վեհապետութիւնն գէթ ի պարտեաց պէտք է որ ամեն պարագայի մէջ ի գործ դնելով՝ կենդանութեան առաջին օրինակն ինք ցոյց տայ և արդեամբ հաստատէ թէ Հայն արդարև ինքնավարութեան արժանի է։

Մեծ իրաւամբ կըսենք զայս, վասն զի այն ժողովուրդն որ գիտէ պաշտպանել իր ազգային շահերն ու իրաւունքները, կրնայ նաև ի հարկին աւանդարար իրեն յանձնուած այլոց շահերն ու իրաւունքներն ալ պահպանել և փոխադարձաբար պաշտպանութիւն վայելել նիւթապէս և բարոյապէս։

(Յ—Հ——— Ն———Լ)

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Ամեն. Խրիմեան Սրբազանէն նոր հեռագիր մը կը ծանուցանէ թէ Հէքքեարիի Քիւրդեր Վանայ շրջակաները 13 գիւղօրէից վրայ յարձակեր և բազում աւար առեր են։

Խրիմեան Սրբազան Վանայ զինուորական հրամանատարին ալ բողոքելով՝ նորա օգնութիւնը խնդրեր է։

Վսեմ. հրամանատարը խոստացեր է իւր օգնութիւնն, եթէ վսեմ. կուսակալը զօրաց

պարէնն ապահովէ . բայց յիշեալ հեռագիրը ցաւ ի սիրտ կը յայտնէ թէ սովուն պատճառաւ կուսակալը չէ կրցեր ապահովել ։

— Ռուսական լրագրաց մէջ նոր հրատարակութիւն մը կը ծանուցանէ թէ Վանայ շրջակայ գիւղօրէից Հայք վերջապէս սովամեռ են իրենց վրայ յարձակում ընող վայրագ ցեղերն հալածելու ։ Բայց այսպիսի տեղեկութիւն մը Պատրիարքարան հասած չէ ։

— Կըսուի թէ Հայ տիկիններէ և օրիորդներէ ոմանք Պ. Ճէյմս Պրայսի նուիրելու համար խիստ գեղեցիկ և ընտիր ձեռագործ մը կը պատրաստեն եղեր , որ՝ ըստ ածին նայելով՝ եղական գործ մ՚ըլլալ կը թուի ։

— Ստոյգ աղբիւրէ կը տեղեկանամք թէ Ազգային Ժողովէն քուէարկուած վարչական կազմակերպութեան նոր օրէնքը Մայր—Դիւանին կողմանէ Ամեն. Ս. Պատրիարքին դեռ չէ յանձնուեր ։

Ձեմք գիտեր թէ սոյն յապաղման պատճառն ի՛նչ է , սակայն ի՛նչ որ ալ լինի , պէտք է անմիջապէս յանձնել ի գործադրութիւն , որովհետև ազգային ներքին խնդրոց ատենադրութիւնն այն աստիճանի հասած է , որ հարկ չը կայ բացատրելու թէ վայրկեանի մը կորուստն անգամ խիստ շատ է ։

— Պատր. Փոխանորդ Խօրէնամեան Գեր. Պօղոս վարդապետ՝ որ երկու շաբաթէ 'ի վեր իր հայրենի գիւղը կը գտնուէր , երէկ երեկոյին վերադարձաւ ։

— Ազգային Ժողովն յառաջիկայ ուրբաթ նիստ ունի 'ի Ղալաթիա ։

Տէր .

Ընկերաւթեանս Նոր Գործ. ժողովոյ կազմութիւնը հիմնական կանոնագրի 20 րորդ յօդուածոյ տրամադրութեան համեմատ Վահրամ էֆէնտի Մարգարեանի յանձնուած լինելով , նա եւ իւր պաշտօնակիցները ընտրած՝ որք են .

Անդրանիկ	էֆէնտի	Շիշմանեան	Ատենադպիր
Աւետիս	»	Թնկրեան	Գանձապահ
Մարտիրոս	»	Սարաֆեան	Հաշուակալ
Յակոբ	»	Մեղաւորեան	Ուսումնապետ

և արդիւնքը Երեսփոխանական ժողովոյս յղած է , որ զայն վաւերացնելով՝ կը խնդրէ Ձեր Մեծապատուութենէն որ դուք ևս սոյն ընտրեալ անդամոց ցուցակը ազգօգուտ Թերթերնուդ միջոցաւ հրատարակէք առ ի գիտութիւն համայն ընկերաց և ընդունիք մեր շնորհակալիքը ։

Ի դիմաց Երեսփ. ժողովոյ Խիղանի Ուս. ընկ.

Ատենադպիր — Ատենապետ

Ց. ՊԷՆԿԼԵԱՆ — Ռ. Ց. ՊԷՐՊԷՐԵԱՆ

24 սեպտ. 1880 Կ. Պոլիս

Տէր Խմբագիր ,

Ա. Մ. էֆէնտի Գարագաշեանի աշխատասիրած և Գավաֆեան տպարանէն նոր ի լոյս ելած 1880 ի միահատոր Քաղաքական և Բնական աշխարհագրութեան դասագրքին քաղաքական մասին 97 րորդ երեսը Ազգային Ուսումնական Խորհրդոյ , դպրոցական ընկերութեանց նաև Ազգային շահուց նախանձախնդիր ամեն Հայ անհատի ուշադրութիւ՜ը կը հրաւիրեմք . . . ։

Հաճեցէք Տէր , սոյն երկտողս Ձեր Ազգօգուտ Թերթին ամենէ մօտակայ թուոյն մէջ հրատարակել և ընդունիլ յարգանքս ։

* * *

1880 սեպտ. 29. Կ. պոլիս
Օրթագիւղ

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

ԱՍԿԷ ԱՆԿԷ

Տօքթո՛ր , տուած հապերուդ մէջ օգուտ մը չեմ տեսներ կոր . —

— Ներեցէ՛ք , սիրելիդ իմ հիւանդ , օգուտ տեսնելու համար չէ , այլ կլլելու համար տուի ես այն հապերը ։

*
* *

Աստուած հանրերութիւն տայ, Գրիգորի՛կ աղա՝ հոգեզբաղիդ . . . ձեզի օրեր . —

— Ա՜հ, բարեկա՛մ՝ այդ ի՞նչ սև լուր, այդ ի՞նչ դատն հարուած (ձեռքը վեր կը վերցնէ մոռնելու համար) .

Արդարև, սիրելի՛, ի՞նչ օգուտ, ունայն տչխարհ : Բայց անզուսակ լինելուն՝ հարստութիւնը ձեզի կտակեց . . . տարեկան 1200 լիրայի եկամուտ մը . —

— Պէտք չէ՞ր ուրեմն որ ասպէր, վասնզի իմ սիրելի հոգեզբաղս . . . (ձեռքը վար կ'իջեցնէ բարեկամին ձեռքը սեղմելու համար) :

* * *

Քա՛ մարդ, ինծի նայէ .

— Ի՞նչ կը պատահ, կնի՛կ .

Ինչո՞ւ չպատահ, գիւղին մէջ խաղք խայտառակ ըրիր ինծի : Երեսիսխան ըլլալէդ 'ի վեր Ազգային ժողովին մէջ բերան բացած չունիս եղեր . գոնէ տունը ձայնդ հանէ որ պարէ Թաղեցիին քով քիչ շատ երես ունենամ . —

— Էյ ի՞նչ ընեմ .

Հիշ որ չէ՞ նէ չոմոխիդ օրօր ըսէ որ քնանայ . ուրիշ ի՞նչ կրնաս ընել :

* * *

Վարպե՛տ, աս ի՞նչ կերպարար է . —

— Զուկեղէն է, տիկի՛ն .

Առջի տուածդ ի՞նչ էր . —

— Զուկ .

Մէկ սեղանի վրայ երկու տեսակ ձկնեղէ՞ն, աս ալ նո՞ր հանեցիր . —

— Կարծեցի որ մոռցաք, կրկին բերի, տիկի՛ն .

Տես աս ապուչը, ծո՛ ամեն մարդ քեզի պէս տկարամի՞տ գիտցար . —

— Քա՛ւ լիցի, տիկի՛ն, հապա քիչ մը առաջ «ան ձուկը մոռցուկ եղաւ» կ'ըսէիր :

* * *

Աւաղակները սրի խնայեր են որ Հիսոկրատի աշակերտները մոռնան :

Այս կարգի բաղդախնդիր մը անցած գիշեր ըժշկի մը տուն կը մտնէ, կը մոռնայ ատրանկոցնոյն, տարճանակը քթին տակ կը դնէ և կ'ըսէ ընպատնալով . —

— Տօքթո՛ր, եթէ ձայն հանես, մեռար . . .

Մեծ սիրալ, կ'ըսէ ըժշկը ամենայն պաղ արեամբ, եթէ ձայն հանեմ, նշան է որ չմեռայ :

ԼՈՒԹՖԻ

ՉԱՒԵՇՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ՊԻՏԻ. — Ըստ քերականին՝ մասնիկ է, որ բառերու սկիզբը դրուելով՝ ասպառնի կը ցուցնէ . ուստի կ'ըսեն «պիտի տամ» . «պիտի տայիս» զոր շատ կը գործածեն պարտատէրները, և սակայն ոնգութ պարտապահանջները չեն համարձիր :

ՊԻՏԻ. — Նաև բայ է, որուն երրորդ դէմքը միայն կը գործածուի, և կը նշանակէ՝ պէտք է կամ պէտք կ'ըլլայ, զորօրինակ՝ բարենորոգում պիտի :

Այս ձևը վճռական ըլլալուն մեծապատիւ Թուրք լրագրները շատ չեն տխորժիր, բայց սիրտ չը կտրելու համար ալ կ'ըսեն, պիտի գործադրուի, . . . եթէ Հայերը գոհ լինին իրաց վիճակէն :

ԼՐԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Տէրութիւններն համաձայն են (վասն զի քերականութիւն գիտեն) տէրութիւններն համաձայն չեն (վասն զի քերականութիւն չը գիտեն). ես ալ որովհետև լրագիր չեմ, այլ հանդէս եմ, կը հետևցնեմ թէ տէրութիւնները թէ համաձայն են և թէ համաձայն չեն այսինքն, թէ քերականութիւն գիտեն և թէ չը գիտեն :

—

Վագրթ կըսէ թէ Վէզիր խանի գինետան մէջ չորս գինով Հայերէն մէկը իր ընկերը զարկաւ :

Մեր լրագիրներն ալ երկրորդ օրը կիմանան թէ ատոնք Քուրդ են եղեր :

Ո՛րը ճշմարիտ է . — Հարկաւ Վագրթին գրածը, որովհետև ըստ Թէրճէմանը—Հագրգաթի Քուրդերը Էղբիայը Էքրատ են :

Կունա՞ս հաւատարութեան օրինակ մը տալ. —

— Այո՛, դատարանաց վճռագիրները.

Ի՞նչ են եղեր. —

— Ատենց մէջ իրաւաներու անունին փոխ «աղա» կամ «էֆէնտի» բառերը կը դրուին. իսկ բրիստոնէից ալ միայն անունները։

* * *

Լրագրաց մէջ ի՞նչ կայ. —

— Մասխ, Մանդուէմ, Թէրմէման, Հայրենիք, Փունջ.

Իմ հարցուցածս ալ չէ; ի՞նչ տեղեկութիւն կայ. —

— Բերանակապ.

Բերանակապն ի՞նչ է. —

— Լրագրաց բերնին չափը։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ

Հայ ազգին այս պարծանքը, Եգիպտոսի նոր Ցովսէփը, դարուս նշանաւոր հանճարներէն մին՝ Նուպար Նուպարեան ծնած է Հալէպոյ քաղաքը (Խրիր)։

Հասակը բարձր է. իսկ դէմքը իր մտաց հանճարոյն և զգացմանց ճշգրիտ պատկերը կը ներկայացնէ, այնպէս որ կենդանագիրը տեսնողը կըսէ՝ ահաւասիկ մեծ մարդ մը որ մեծ գաղափարներ իրականացնելու առաքելութեան պաշտօնով յաշխարհ եկած է։

Տարիքն 56 է։

Դեռ մօրն արգանդին մէջ եղած ատեն իր միտքը մեծ խնդիր մը լուծելու կղզուէր, այսինքն՝ թէ մարդն ինչո՞ւ յաշխարհ կուգայ։

Միտքն երբ լուծեց այս խնդիրը, ալ չուզեց որ ընդհանուր կարծիքին հետևելով՝ դուրս ելլալու ժամանակին սպասէ. ուստի մէկէն ի մէկ դուրս յատակեց և ըսաւ՝ մարդն ապրելի ելլալու համար ծնած չէ, այլ իր աշխատութեամբն երջանիկ ելլալու համար։

Հետևաբար Հալէպոյ հայրենակիցը մինչև 11 տարի Խրիրի մէջ նախնական ուսմանց ընթացքն աւարտելէ ետև՝ տեսնելով որ իր մտացն համար աւաստ սնունդ չկայ հոն՝ շունչն ուղղակի Ֆրանսայի Սարկէզ քաղաքն տուաւ և հետզհետէ ուսաւ այն բաները՝ որ կը բարձրացնեն զմարդ իր հասարակ ատիճանէն։

Իրեն հարկաւոր եղածներն, այն է, Գալ. Անդր. Գերմ. մաթէմատիք, երկրագործութիւն, օրէնագիտութիւն, վաճառականութիւն, քաղաքական տնտեսութիւն ևն. ինը տարուան մէջ ուսաւ։

Գիտէ նաև Ասորերէն և Հայերէն ալ կը գրէ։

Զինքը գիտցողները կըսեն թէ ուսմունքն հայրի պէս կը կլլէ եղեր, որովհետև իրեն սկզբանէ ունեցեր է թէ մինչև որ մարդուս միտքը չը կշտանայ մարմինը չը յագենար։

20 տարեկան եղած ատենը Եգիպտոսի հմբասաւոր Իսմայիլի փաշային հետ բարեսիրութեան պաշտօնով Մովսէսի հայրենիքը գնաց և միտքը դրաւ որ մօրն արգանդին մէջ լուծած խնդիրն իրականացնէ, որովհետև տեսաւ թէ չինականն ապատ չէր անդ և որովհետև տեսաւ թէ արդարութեան նժարը պակաս կը կշռէր։

Նուպար պէյ իր հանճարին շնորհին հետզհետէ յառաջ գնաց գրաւելով միանգամայն փարաւոնների երկրին իշխանութիւնը վարող Խեդիվին վստահութիւնը, որով միայն պիտի հասնէր նպատակին իրականացմանը, որուն մէջ կորսնէր միայն իր ճշմարիտ փառքը։

Նուպար պէյ քանի մը տարիէն արտաքին գործոց նախարարութեան պաշտօնին բարձրացաւ և վաճառականութիւնն ու երկրագործութիւնը զարգացնելու համար այն ճիգերուն համար յատուկ պաշտօնէութիւն ալ հաստատեց, ինչպէս նաև հասարակային շինութեան պաշտօնէութիւնը՝ զարս առաջին անգամ ինք վարեց։

Նուպար պէյ մէկ կողմէ քաղաքական խնդրոց հետ կզբաղէր, որովհետև համոզուած էր որ երկիրը մը ներքին բարեկարգութիւններով միայն կրնայ վերանորոգիլ, ներքինին ալ մեծ հոգ կը տանէր։

Եւ որովհետև քաջ գիտէր թէ ամեն բանէ առաջ արդարութիւն պէտք է գործադրել, իր ուշադրութիւնը նուիրեց գլխաւորապէս դատարանաց վերակազմութեանը։

Այս մեծ գործին իրականացմանն համար երկու մեծ դժուարութիւն կար. իր առջին, այսինքն Խեդիվն համոզել և Եւրոպացոց հաւատացնել թէ Եգիպտոսի մէջ արդարութիւն գործադրելն անկարելի չէ։

Եգիպտոսի վերանորոգչին յղացող հանճարն այս

երկու մեծ դժուարութեանց ալ յաղթեց և յաջողեցաւ, Եգիպտոսէն Եւրոպա և Եւրոպայէն Եգիպտոս գրեթէ միշտ երթալ գալով։

Նուպար փաշա ինքզինք շատ շատ ճանչցուց Եւրոպայի և կամ Եւրոպա զինքը ճանչցաւ։

Ինչպէս կանուանէ Շանշեան, Հայազգի դիւանագիտաց աւագագոյնը կրցաւ բոլոր Եւրոպայի համակրական վստահութիւնը գրաւելով՝ Պիքոնսֆիլտի բարեկամը, Պիզմարքի մտերիմը կոչուիլ և Նաբոլէօն Գ. ի օրով փայլիլ։

Նուպար փաշայի յառաջադիմութիւնը ալէօք է գլխուն թէ տարօրինակ գաղտնիք մը չէ։

Սա իր սկզբունքը զուտն է։

Իր սկզբունքներն են ծանր բայց ուժով քալել, սկսածն հաստատամտութեամբ շարունակել, ամէն միջոց նպատակին զոհել, դժուարութեանց առջև չընկրկիլ, այլոց վրայ շատ չը վստահիլ, և միայն իր վրայ վստահիլ, որովհետև կրաւորական դիրք ունենալ չը սիրէր երբէք։

Ասոր համար ոմանք զինքն հպարտութեան անձնասիրութիւն կը համարին (հաւանականաբար վեհութիւնն հպարտութեան հետ շփոթելով)։

Քանի որ մարդ իր «ես»ն ունի, անընդունելի չէ որ Նուպար փաշայի պէս մեծ հանճար մ'ալ իր «ես»ը չունենայ, իր գործոցը վրայ չը վստահանայ և չըսէ թէ «ես ալ Նուպար եմ»։

Այսպիսի դաւանութիւն մ'արդիւնք է վեհութեան, որով կը հասնի մարդ իր բարձրութեանը, որովհետև բարձրանալը մարդուս իրաւունքն է, որովհետև մարդը միայն մեծ է և որովհետև մեծ կոչուելու սահմանուած։

Հետևաբար Նուպար փաշայ ալ մեծ է իր գործերովը և ոչ իր հարստութեամբը, ըստ որում հարստութիւնը մեծութիւն չէ, բայց մեծ մարդ մը կրնայ հարուստ ըլլալ, ինչպէս որ Նուպար փաշայ ալ հարուստ է։

Սա իր խորագիտութեամբն ու անյողդողդ ջանիւքը դատարանաց վերակազմութեան մեծ գործէն զատ՝ Սուէզի ջրանցքին շինութեան և բազմաց մեծ խնդիրն ալ յաջողեցուց, բոլոր բանակցութիւններն ինք անձամբ կատարելով և անոր մէջ Եգիպտական և վեհապետական շահերն ապահովելով։

Ըստ Եւրոպայեաց վկայութեան՝ այն խնդրոյն կարգադրութեանը մէջ Նուպար փաշայի անունը մեծ տեղ մը կը բռնէ, այնպէս որ Եգիպտոս և Սուէզ անունները յիշող մէկին անկարելի է որ անոր անունն ալ չը յիշէ, որովհետև նոր պատմութեան այս երեք անունները կապուած և միացուած է, որովհետև իրմով բարձրացաւ Եգիպտոսի անունն Եւրոպայի առջև և իրմով մեծ նշանակութիւն ստացաւ։

Հին պատմութիւնը կ'ըսէ «Իսրայէլեայի Յովսէփը ահագին սովէ մ'ազատեց Եգիպտոսն. իսկ նոր պատմութիւնն ալ իրեն համար պիտի ըսէ հարկաւ թէ՝ Հայազգի Նուպարը Եգիպտոսը վերանորոգեց»։

Նուպար փաշայի հաստատած դատաստանական դրութիւնն իր արդիւնքը ցոյց տուաւ. ընդհանուր վստահութիւն սկսաւ յառաջ գալ և արդարութիւն գործադրիլ։

Անկախ դատարանը նախորդ Խտիվին դէմ ալ վճիռ տուաւ։

Անագան ուրեմն զգաց Ն. Բարձրութիւնն այս եղածը, և ահա այս վայրկենէն սկսաւ իր և Նուպար փաշայի միջև անհամաձայնութիւնը, որուն վրայ պաշտօնէ քշուեցաւ այս վերջինը որ Եւրոպա գնաց։

Նուպար փաշա տարինէ մը ետքը դարձեալ Եգիպտոս կոչուեցաւ, և ինչպէս գիտեն ընթերցողք, առաջին նախարար անուանեցաւ իր վրայ պահելով արդարութեան՝ վաճառականութեան և երկրագործութեան նախարարութիւնը, բայց ութը ամիսէն իր և Խտիվին միջև ստեղծուած անհամաձայնութեան պատճառաւ պարտաւորեցաւ հրաժարիլ։

Ասոր պարագաներն ընթերցողք քաջ գիտեն։

Նուպար փաշա անցաւ Եւրոպա, և ահա անկէ ետքը պատահեցան այն անցքերը, որ նոյնպէս պատմութեան մէջ մեծ տեղ մը կը բռնեն։

Իր բնաւորութիւնը ճշդիւ նկարագրած կըլլանք եթէ ըսենք թէ Նուպար փաշա միտքը դրածը կը կատարէ, որովհետև իր կամքը երկաթեայ է, որ չը սասանիր երբէք։

Ներսէս Վարժապետեանի ջանքովը հաստատեց Նուպար փաշա Հասքէօյի Ա. Նուպար—Շահնազարեան վարժարանը, որ թէպէտ փակուած է այժմ, բայց յոյս կայ թէ իր շնորհիւ դարձեալ բացուի։

Ասոր յապաղման պատճառ եղած են միայն կրից արդիւնք եղող այն անխորհուրդ հրատարակութիւններն, որ Ն. Վսեմութեան մտացը մէջ կասկած զարթուցին։

Ուստի հարկ է նախ այդ կասկածը փարատել։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿ. ՀԱՅՈՑ
ԳԵՂԱՏԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ
Դրուագներ Հայկական վիճակներէ
8 Տեսակի մէջ ամփոփուած

Հեղինակին բազմաջան աշխատութեամբ մեծ խնամքով և մաքուր վիմագրութեամբ պատրաստուած սոյն գեղագրութեան տեսակներու Ա. և Բ. արդէն հրապարակ ելած և միւսներն ալ մամլոյ տակ են,

Այս տեսակ օգտակար գործ մը՝ որ իւր տեսակին մէջ առաջին անգամ լոյս կը տեսնէ ազգային հաստատութեան մը ձեռօք, թէ դիւրուսոյց եղանակաւը, թէ գիրերու վայելչութեամբը, և թէ գնոյն աժանութեամբը՝ արժանի է որ ամէն ազգային վարժարանաց մէջ մուտ գտնէ։

Իւրաքանչիւր տեսակը կը բաղկանայ 24 էջէ, հատին գինն է 30 փարայ արծաթ. դպրոցաց և հարիւրէ աւելի առնողներու համար մասնաւոր զեղչ կը լլլուի։

Կեդրոնատեղին է Միացեալ Ընկ. դրասենեակը, Ղալաթիա Կէօչէ—օղլու խան թիւ 13, կը գտնուի ամէն Հայ դրավաճառաց քով։

Հայոց Միացեալ Ընկերութեանց կնիքը չի կրող օրինակները անվաւեր են։

Նորայրի Գաղղիերէն—Հայերէն բառարանին տասնուհինգերորդ թերթն հրատարակեցաւ, որոյ մէջ Այբ գիրն աւարտած է և Պէ կը սկսի։ Այսուհետև ամէն շաբաթ օր կանոնաւոր կերպով կը հրատարակին թերթերն։ Վաճառման գլխաւոր տեղին է Ֆըրէնկեան դրավաճառանոցը, Ուզուն չարշը, թիւ 362։ Որոնք որ կը փափաքին բաժանորդագրուիլ մէկուկէս օսմանեան ոսկի կանխիկ վճարելով, կրնան դիմել Պ. Ֆրէնկեանի։ Ի դիւրութիւն հասարակութեան թերթերը կը վաճառուին նաև Գալաֆեան և Ղուկասեան դրավաճառաց քով, ինչպէս նաև Արշակ էֆէնտիի թղթավաճառանոցը ի Ղալաթիա և Վայսի դրավաճառանոցը ի մեծ փողոցն Բերայի։

Գին իւրաքանչիւր թերթին 60 փարա արծաթ։

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ

Գրեց

ՆԱԶԱՐ Ց. ԳՈՐՈՑԵԱՆՑ

Ահաւասիկ ընտիր երկասիրութիւն մը, որով Մեծ. հեղինակն իւր ողջամիտ դաղափարներովն և մանրախոյզ հետազօտութիւններով խիստ մեծ ծառայութիւն մը կը մատուցանէ ազգային ամենէն կենսական, այս է դաստիարակութեան խնդրոյն։

Սոյն գործը 400 մեծադիր երեսներէ բաղկացեալ է, և գեղեցիկ տպագրութեամբ Պարտիզպանեան տպարանէն ի լոյս ընծայուելով կը ծախուի Եէնի—ճամի Զիլինկիրլէր ճատտէսի, թիւ 24. Ղուկասեան գրատունը։

Գին 5 ղրշ.

ԱԶԴ

Կ. Պոլիս Մէրճանը Բիւշտի էֆէնտի խանին դիմացը նոր բացուած «Իտարէ Լօգոն-թասը» ի ճաշարանապետը՝ որ Հայազգի մ'է, պատիւ ունի ծանուցանել արդոյ հասարակութեան թէ իւր ճաշարանը դիմող ամէն կարգի անձինք խիստ գոհ պիտի ըլլան թէ մաքուր և խնամով պատրաստուած կերակուրներէն և թէ անոնց ժանութենէն։

Վերջապէս իւր յաճախորդները գոհ ընելու մասին ամէն կերպով ջանք և աշխատութիւն զլացած չէ։

Բաժանորդ ըլլողներու համար ալ մասնաւոր զեղչ կը լլլայ։

ԱՐՏՕՆԱՏԷՐ Հ. Ե. ԳԻՄԱՔՍԵԱՆ
ԽՄԲԱԳԻՐ Մ. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԻՓԱՑԵԼ ՍԱՐԳԵԱՆ
Մէրճան չարշի Բիւշտի էֆ. խանի տակ թիւ 20